ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1723 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՌԱԶՄԵՐԸ ՍՅՈՒՆԻՔ

Ա. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

«Ղափանցվոց պատմության»[1] Համապատում բնագրի խմբագրության հարցերին անդրադառնալիս, հաճախ ենք հանդիպում մի երևույթի, որին Ռ. Ջ. Քոլլինգվուդն անվանում էր «մկրատի և սոսնձի պատմական մեթոդ»[2], այն է՝ սովորական կոմպիլյացիային։ Այսպես, Թորոսի՝ Դավիթ-բեկին ներկայանալու պահից սկսած մինչև Ս. Շահումյանի պատումի ավարտը, նախնական երկու պատումները Համապատումում ներկայացված են առանձին-առանձին (էջ 150—153-ում վերաշարադրված է ՊՏԱ-ի համապատասխան հատվածը—հմմտ. էջ 132—134, էջ 154—164-ում՝ ՊՍՇ-ինը—հմմտ. էջ 122—130)։ Բացի Նախիջևանի խանի զորքերի դեմ Դավիթ-բեկի մղած երկու տարբեր ճակատամարտերի նույնացման անհաջող փորձից[3] (Համապատում, էջ 153), Համապատումի սահմանագծված մասում (էջ 150—164) նախնական զույգ պատումների համեմատական վերլուծության վրա հիմնված որևէ այլ խմբագրական լուրջ միջամտություն Ղուկաս Սեբաստացին չի արել։

Արդ, հաշվի առնելով նախնականների զուգընթաց շարադրությունը, անցնենք հիշյալ հատվածների քննությանը։

* * *

Տաթևից Զավնդուր վերադառնալուց հետո Թորոս-բեկը պատրաստություններ է տեսնում և գարնան բացվելուն պես նախահարձակ է լինում Բարգուշատից եկած քոչվորների վրա, որից հետո տեղի է ունենում Զավընդուրի առաջին մեծ ճակատամարտը։ Երկու նախնական պատումները զուգահեռաբար պատմում են հայերի այդ խոշոր հաղթանակի մասին.

ՊՍՇ — «Յետ այսորիկ աւուրքն, աւուրք գարնանային ... իբրեւ լուաւ Պարկուշատու Փաթալի Սուլտանն եւ իւր եղբայրն Աղասի Սուլտանն, թէ Հայքն Զանդուրեան ապստամբեալ են ի Թուրքաց եւ կոտորեալք են զնոսա ... ել ... երկոտասան հազարաւ ի վերայ Զաւունդուրին. իսկ նոքա առաքեցին յառաջագոյն ի Կամնադրոյ[4] ի յԻշկերտոյ 150 սպառազէն, կալնուլ զկիրճս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ, եւ դարան մտին նոցա անդ։ Արդ՝ զօրքն Թուրքաց իբրեւ հասին անդր, զօրքն Հայոց արձակեցին ի վերայ նոցա զհրացանս՝ մինչեւ ի դարձուցանել զնոսա ի կրունկս. եւ իբրեւ դարձան նոքա, սոքա պնդեցան զկնի եւ կոտորեցին ի նոցանէ չորս հազար այր, եւ մնացեալքն փախեան ի Պարկուշատ» (էջ 122)։ ՊՏԱ — «Վասն զի զայն ամենայն լուեալ եւ տեսեալ Պարսիցն, որք շուրջ էին զնոքօք կուսակալք

---

[1] Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամվել վրդ. Արամյան, Վենետիկ—Ս. Ղազար, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց)։ Այս հրատարակության բնագրային մասը հոդվածիս շարադրանքի մեջ, համառոտագրություններով, հղելու ենք ըստ հետևյալ հատվածների. ՊՍՇ—Պատում Ստեփան Շահումեանի, էջ 119—130. ՊՏԱ—Պատում Տէր Աւետիք քահանայի, էջ 131—143. Համապատում—Համապատում բնագիր, խմբագրեց Հ. Ղուկաս վրդ. Սեբաստացի, էջ 147—181. Զորացուցակ—Դավիթ-Բեկի զորավարների ցանկը և Տեր-Ավետիքին նվիրված ներբողը, էջ 143—145։

[2] Р. Дж. Коллингвуд. Идея истории. Автобиография. М., 1980, с. 34.

[3] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 120—130։

[4] «Կամնադուր» տեղանունը Համապատումից դուրս է մնացել (տե՛ս. էջ 155)։

նաեւ կուսակալն Խափանու, Խանն Պարկուշատու՝ որ կոչի Բաթալի Խան, եւ Խանն Ղարադաղ[5] երկրին. սոքա ամենեքեան եկեալ ի միասին, եկին ի վերայ Զաւնդուր գաւառին՝ ութ եւ տասն հազարաւ, յաւուր քառասնորդաց պահոց՝ ի տօնի սրբոյ Լուսաւորչին։ Իսկ Հայոցն յուսալով յողորմութիւնն Աստուծոյ ի գիշերի յարութեանն Քրիստոսի դրմեալ ի վերայ բանակի նոցա՝ հարին կոտորեցին զնոսա, եւ առին զբանակն, եւ զայլսն փախստականս արարին» (էջ 132)։

Որ սա նույն ճակատամարտն է, եզրակացնում ենք հետևյալից. 1. Երկու պատումներում էլ այն նկարագրված է Թորոսի՝ Տաթևից Զավնդուր վերադառնալուց հետո։ 2. ՊՍՇ-ն, բացառությամբ Նախիջևանի խանի հետ Դավիթ-բեկի առաջին բախման և Զևու բերդի գրավման (վերջինիս մասնակից էին նաև Զավնդուրի, Կենավուզի և Գուրհամի զորքերը — տե՛ս ՊՍՇ, էջ 124. հմմտ. ՊՏԱ, էջ 133), հիմնականում ծանրանում է Ղափանի հարավային շրջաններում տեղի ունեցած անցքերի վրա։ Դա բացատրվում է, ինչպես նշել ենք, այդ շրջաններում Ս. Շահումյանի բնակությամբ և նրա զբաղեցրած պաշտոնով (Ստեփանոսը նաև Պապ զորավարի տեղակալն էր,— տե՛ս Չորացուցակ, էջ 143)։ Ուստի բացառվում է, որ Շահումյանը հիշատակած չլիներ Զավնդուրում կայացած այդպիսի խոշոր հաղթանակը։ 3. Ըստ Ս. Շահումյանի, ճակատամարտը եղել է գարնանը՝ «յետ այսորիկ աւուրքն, աւուրք գարնանային»։ Անշուշտ սա 1723 թ. գարունն է, քանզի մեզ հայտնի է, որ 1724 թ. մարտի վերջին—ապրիլի սկզբին տեղի է ունենում Թորոսի 6000-անոց նորահավաք զորաբանակի Բարգուշատի ողբերգական վախճանով արշավանքը։ Ս. Շահումյանի շարադրանքն ինքնին հաստատում է, որ այդ երկու ճակատամարտը չէին կարող լինել նույն թվականի նույն գարնանը (տե՛ս ՊՍՇ, էջ 122—125)։ Իսկ Տեր-Ավետիքը հաղորդում է, որ Զավընդուրի հաղթական կռիվները եղել են Գրիգոր Լուսավորչի տոնից մինչև Զատիկը, այսինքն՝ նույնպես գարնանը։ Համապատում բնագիրն էլ ավելի է պարզեցնում հարցը, հայտնելով, որ Տեր-Ավետիքի պատմած ճակատամարտը տեղի է ունեցել «յամին երկրորդի, յետ գալստեան Դաւթի ի Ղափան» (էջ 151), այսինքն՝ 1723 թ.։ Աշ. Աբրահամյանը տոմարական ստույգ հաշվարկ կատարելով, գրում է, որ 1723 թ. «Լուսավորչի տոնը եղել է մարտի 31-ին. այդ օրն է, որ խանական զորքերը սկսել են իրենց հարձակումը, իսկ Հարության տոնը՝ Զատիկն այդ տարում եղել է ապրիլի 14-ին, այդ օրն էլ հայկական զորքերը ջարդել են խանական միացյալ զորաբանակին»[6]։ 4. Ս. Շահումյանի համաձայն, Զավնդուրի վրա հարձակվողները երկուսն էին. «Պարկուշատի Փաթալի սուլտանն եւ իւր եղբայրն՝ Աղասի սուլտանն» (ՊՍՇ, էջ 122)։ Ըստ Տեր-Ավետիքի, թշնամու զորքի առաջնորդները նույնպես երկուսն են՝ «կուսակալն Խափանու, Խանն Պարկուշատու՝ որ կոչի Բաթալի խան, եւ Խանն Ղարադաղ երկրին» (ՊՏԱ, էջ 132)։ Համապատումում Տեր-Ավետիքի տվյալներն աղավաղվել են, դառնալով երեք խան՝ «կուսակալն Խափանու, եւ Փաթալի սուլտանն, եւ ընդ նմա խանն Սեաւ լերին» (Համապատում, էջ 151)։ Աշ. Աբրահամյանը, ծանոթ լինելով նախնական բնագրերին, չի նկատել այս սխալը և հենց այդպես էլ գրել է, որ «Ղափանի սուլթանը, Բարգուշատի սուլթանը և Սև լերան խանը, միավորելով իրենց

---

5 Տեքստում գրված է Ղարադուղ. սա, անշուշտ, Ղարադաղն է, քանի որ Համապատումում այն դարձել է «Սև լեռ» (էջ 151)։ «Ուղ» վերջին տառերը գրի կողմից կամ տպագրության ժամանակ թույլ տրված վրիպակ են՝ «աղ» և «ուղ», «զ» և «ղ» տառերի ձեռագրային նմանության պատճառով։ Ս. Արամյանի Առաջաբանում ՊՏԱ-ի նույն հատվածը բերված է «Ղարադուղ» ձևով (էջ 79)։

6 Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 170։

ուժերը, հարձակվում են Դավիթ-բեկի վրա»[7]։ Այնինչ Տեր-Ավետիքի հաղորդածը միանշանակ է՝ Ֆաթհ-Ալի (Բաթալի) սուլթանը եղել է և՛ Ղափանի, և՛ Բարգուշատի կուսակալ։ Այս փաստն ամենից լավ ապացուցում է Հ. Դ. Փափազյանի կողմից վերջերս հրապարակված շահ Թահմասպ II-ի մի հրովարտակը, որտեղ Ֆաթհ-Ալի սուլթանն անվանված է «Բարգուշատի և Ղափանի հաքիմ»[8], այն է՝ կուսակալ։

Այսպիսով, երկու պատումների մեջբերված հաղորդումները վերաբերում են նույն ճակատամարտին և միմյանց նկատմամբ արժեքավոր լրացումներ են անում։ Օրինակ, Տեր-Ավետիքի հաղորդման շնորհիվ հնարավոր է դառնում գտնել ճակատամարտի ճիշտ ժամանակը. Շահումյանի պատումից իմանում ենք Բարգուշատի և Ղարադաղի զորքերի կորուստների թիվը՝ «չորս հազար այր»։ Համեմատելով թշնամու զորքերի ընդհանուր թվաքանակի մասին նախնական պատումների տարբեր տեղեկությունները՝ 12 հազար (ՊՄՇ) և 18 հազար (ՊՏԱ), նախապատվությունը պետք է տալ Ս. Շահումյանի հաղորդածին՝ 12 հազարին, քանի որ նա ավելի մոտ է եղել և, ըստ երևույթին, մասնակցել է հիշյալ մարտերին, որը երևում է նաև մանրամասն շարադրանքից։

Տեր-Ավետիքի և Ս. Շահումյանի հաղորդումների համադրումից պարզվում է, որ Ֆաթհ-Ալի սուլթանի Աղասի անունով եղբայրը Ղարադաղի՝ Բարգուշատին կամ Ղափանին հարող որոշ շրջանների տիրակալն էր՝ «Խանն Ղարադաղ երկրին»։ Հիշատակելի է, որ այս երկու դաշնակիցները կրկին միասին են հանդես գալիս Թորոս-բեկի զորաբանակի կործանման գործում (տե՛ս ՊՄՇ, էջ 125. հմմտ. Համապատում, էջ 158)։

Դառնալով Ղ. Սեբաստացու խմբագրությանը, տեսնում ենք, որ նախնական պատումների 1723 թ. մարտի 31—ապրիլի 14-ի մարտերին վերաբերող տվյալներն առանց քննադատական որևէ վերլուծության, առանձինառանձին վերաշարադրված են Համապատում բնագրում. էջ 151-ում՝ Տեր-Ավետիքի հաղորդածը, իսկ էջ 154—155-ում՝ Ս. Շահումյանինը (հմմտ. ՊՏԱ, էջ 132. ՊՄՇ, էջ 122)։ Սյունյաց ազատամարտի հստակ պատկերն ու ժամանակագրությունը որոշելիս, այս կրկնողությունը, բնականաբար, շփոթություն է առաջացնում։ Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ Ղ. Սեբաստացին կռահել է նախնականների խնդրո առարկա զույգ հաղորդումների միևնույն ճակատամարտին վերաբերելու փաստը. Համապատումում՝ Տեր-Ավետիքի պատմածի վերաշարադրության մեջ ներմուծված է մարտի ընթացքին վերաբերող մի դրվագ, որը չկա ՊՏԱ-ում, բայց մանրամասն նկարագրված է ՊՄՇ-ում։ Այն հայոց զորքերի դարանամուտ լինելու մասին է՝ «Իւկ զորքն Հայոց, որք դարան մտեալ էին նոցա...» (Համապատում, էջ 151), այնուհետև՝ ՊՏԱ-ի վերաշարադրությունը լեզվական որոշ մշակմամբ։

* * *

1723 թ. մարտի 31—ապրիլի 14-ի Ջավնդուրի հաղթական մարտերին հաջորդած իրադարձությունների մասին Ստեփանոս Շահումյանը պատմում է հետևյալը.

Ջավնդուրի հաղթանակի «հետևեալ աւուրն», այսինքն՝ 1723 թ. ապրիլի 15-ին, Լեհվազի ձորում բնակություն հաստատած մահմեդականների առաջնորդ Մանաճիր Փաշի Սաֆիղուլին («Սափի Ղուլին») 300-հոգիանոց

---

[7] Նույն տեղում, էջ 169. հմմտ. П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в 1-ой четверти XVIII века. М., 1954, էջ 266։

[8] Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն. Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1, էջ 93։

ջոկատով գալիս է Ափկիս և պատրաստվում է Քիս «թուրքարնակ»[9] ավանի ուժերի համագործակցությամբ հարձակվել և ավերել Մանլեր՝ շրջակա հայկական գյուղերի հետ միասին։ Տեղեկանալով այդ մասին, Թորոս-բեկը, վերցնելով իր հետ 500 զինվոր, գիշերային սրընթաց արշավով Զավնդուրից անցնում է Կենավուզ (հավանաբար՝ Շիշկերտից դեպի Մազրա և Ափկիս տանող լեռնային ճանապարհով, հմմտ. ՊՍՇ, էջ 127) և «յառաւօտուն պահու յերեքտասաներորդ ժամու» նախահարձակ է լինում Ափկիսի վանքում գտնվող Սաֆիղուլու ջոկատի վրա, նրան փախուստի է մատնում և ոչնչացնում 80 զինվոր։ Ս. Շահումյանը երկու տեղում՝ ա) Ֆաթհ-Ալի սուլթանի և Սաֆիղուլու զորքերի և բ) Սաֆիղուլու և Քիս ավանի ուժերի համատեղ գործողությունների խափանումը բացատրում է նախ՝ Սաֆիղուլու, ապա՝ Քիսի առաջնորդ Միրզա Սայիլի հայոց դեմ պատերազմելու սկզբնապես ունեցած անհամաձայնությամբ և չկամությամբ (տե՛ս ՊՍՇ, էջ 122, 123)։ Առաջին դեպքում, սակայն, հայկական զորքերի թիկունքում Սաֆիղուլին փորձում է ռազմական գործողություններ ծավալել Զավնդուրի հաղթանակի հաջորդ օրն իսկ, գլխավոր ճակատամարտից ուշանալով ընդամենը մեկ օրով, իսկ երկրորդում՝ պիտի կարծել, որ Թորոսի գիշերային ռազմարշավը կանխեց Սաֆիղուլու և Միրզա Սայիլի ուժերի միացումը, քանի որ դրան անմիջապես հաջորդում է քիսեցիների ելույթը Թորոսի զորքի դեմ։ Այս ամենը նշանակում է, որ հայկական զորքերի սրընթաց և հաշվարկված գործողությունների շնորհիվ հաջողվել էր տապալել Բարգուշատի և Ղափանի մահմեդական ուժերի միատեղ հարձակումների ծրագիրը և առանձին-առանձին պարտության մատնել նրանց։

Հաշվի առնելով դեպքերի արագ զարգացումը, կարող ենք ասել, որ Քիս ավանի ավերումը, Պապ Կալերեցու նշանակումը Կենավուզի և Գուրհամի հայոց զորքերի հրամանատար, այնտեղ անցկացված զորահավաքը, այնուհետև՝ Լեհվազի (Լևազի) ձորից «թուրք» տարրի բնաջնջումն ու արտաքսու-

---

9 Ստուգապես չգիտենք, թե ինչ էթնիկական պատկանելություն են ունեցել Ղափանի ներսում բնավորված մահմեդականները։ Օրինակ, Տեր-Ավետիքը Ղարաշոլուներին անվանում է «թուրքեր» (ՊՏԱ, էջ 132), իսկ Աբրահամ Կրետացին՝ «քրդեր» (Աբրահամ Կրետացի. Պատմություն, Քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղարզանյանի. Երևան, 1973, էջ 150, 151)։ Ն. Ագոնցը գրում է, որ Ղարաշոլուները «իսկապես ոչ թուրք են և ոչ քուրդ, այլ այն ինչ որ այժմ կոչվում է Թարաքեամա, այսինքն թուրքմեն» (Ն. Ագոնց. «Դավիթ բեկ» վեպի պատմական հիմքը և դազափարախոսական արժեքը.—Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). կյանքը, գրականությունը, հիշողություններ. Փարիզ, 1937, էջ 125)։ Պետք է ասել, սակայն, որ հայոց մեջ «քուրդ» և «թուրք» էթնոնիմները ուշ միջնադարում հաճախ գործածվել են կրոնադավանական իմաստով և նշանակել են «մահմեդական» (թեև Ղարաշոլուների քուրդ լինելու մասին Աբրահամ Կրետացու հաղորդումն ստույգ է. հմմտ. Թուրքական ազգյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Ե. Սաֆրաստյան. Երևան, 1961, էջ 159)։ Այսպես, Ս. Շահումյանը հայտնում է, որ Պապ հազարապետը Լեհվազի ձորում կոտորել է տալիս «զերիս տուն թուրքացեալս» (ՊՍՇ, էջ 124)։ Համապատասխանում սա, միանգամայն արդարացիորեն, դարձել է «զերիս տունս, որք ուրացեալք էին զՔրիստոս» (էջ 156)։ «Թուրքանալը» նույն նշանակությամբ էր գործածում նաև Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Մ. Կարապետյան. «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 1, էջ 220—221)։ Հ. Կնյազյանի հայտնած այն կարծիքը, թե «մինչև 1726 թ., երբ սկսվեցին թուրքական արշավանքները դեպի Սյունիք, Սյունիքի մահմեդական բնակչությունը գրեթե բացառապես պարսիկներն էին» (Հ. Ա. Կնյազյան. Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ. Երևան, 1963, էջ 95), ընդունելի չէ թեկուզ այն պատճառով, որ այդ բնակչության զգալի մասը կազմող Ղարաշոլուները, Ջիվանշիրը (Օթուզիքի) և այլ ցեղերը վրանարնակ քոչվորներ էին։

մը[10] (տե՛ս ՊՍՇ, էջ 123) տեղի են ունեցել, հավանաբար, 1723 թ. ապրիլի երկրորդ կեսից մինչև, առավելագույնը, հունիսի սկիզբը։

Երկու ամիս անց («յետ այսորիկ իբրեւ երկու ամիս ի վերայ անցին»), այսինքն՝ 1723 թ. հուլիս-օգոստոսին կռիվները նոր թափ են ստանում. Օրդուբադ («Ուրգուար», «Ուրդուվար», «Ուրդվար», «Ուրդվար») փախած Սաֆիղուլին ասպատակում և ավերում է Սայիպունի (sic) հայկական գյուղերը. ի պատասխան, Դավիթ-բեկը հրամայում է Մխիթար «հարյուրապետին» (sic) ոչնչացնել Թաղամերում մնացած 60 տուն «թուրքերին» (ՊՍՇ, էջ 123—124)։ Ահա այս միջոցին էլ ավարտվում է Հալիձորի կուսանոցի վերածումը Դավիթ-բեկի նստավայր-բերդի. «Եւ զայսու ժամանակաւ՝ Դաւիթ կատարէր զշինուած բերդին որ ի Հալի ձոր» (Համապատում, էջ 156, հմմտ. ՊՍՇ, էջ 124)։

Այսպիսով, հստակ է, որ մինչև 1723 թ. օգոստոսը Հալիձորի կառուցումը դեռ չէր վերջացել։ Տեր-Ավետիքի պատումում մի տվյալ կա, որն օգնում է առավել ճշգրտել այս դեպքի ժամանակը. Ղարաբաղի հայոց զորքի հրամանատար «Յոհաննէսը» (Համապատումում վերջինս անվանված է «Յոհաննէս պետն Քուքարացւոց», տե՛ս էջ 152), ժամանելով Ղափան, Շնհերի բանտում է գտնում Տեր-Ավետիքին և նրա աներ Մելիք Փարսադանին, որոնց Դավիթ-բեկը այդտեղ էր նետել 15 օր (ըստ Համապատումի՝ 12 օր) առաջ՝ Ղափանի հայության շարժմանն ակտիվորեն չմասնակցելու համար։ «Յոհաննէսը» «ազատէ զնոսա եւ առաքէ Դաւիթ Պէկին ի Հալիձոր» (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Ա. Ա.)։ Այնուհետև «Յոհաննէսն» այցելում է Տաթև. Դավիթ-բեկն այստեղից էլ էր բացակայում (տե՛ս ՊՏԱ, էջ 132—133. հմմտ. Համապատում, էջ 151—152), այսինքն՝ կարող ենք ասել, որ Դավիթ-բեկը որոշ ժամանակ էր ինչ վերջնականապես տեղափոխվել էր Հալիձոր։ Տեր-Ավետիքը հիշում է նաև, որ ղարաբաղցիները, դալով Ղափան, ապարդյուն պաշարում են Որոտնա բերդը։

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում է կայացել Տեր-Ավետիքի նկարագրած Ղարաբաղի զորքերի անցումը Ղափան։

* * *

Խորհրդահայ պատմագիտության մեջ «ընդունված փաստի» բնույթ է ստացել «Յոհաննէսի» ժամանումը Ղափան նույնացնել Սղնախների զորքի 1724 թ. ապրիլի օգնական արշավանքի հետ[11]։ Մինչդեռ նախորդ քննության արդյունքները ցույց են տալիս, որ այս նույնացումը ճիշտ չէ։ 1. Այն հակասում է նախնական բնագրերի ժամանակագրական իրարահաջորդության սկզբունքին. 1724 թ. ապրիլին Ղարաբաղի օգնական զորքը (որի մեջ էր

---

10 Համապատումից դուրս են մնացել երեք «թուրքարնակ» ընաշնչված գյուղերի անունները՝ Դամալի, Շրվի և Գիրենայ։ Սակայն հիշվում է չորրորդը՝ Թաղամերը, որի անունը չէր ընդգրկվել ՊՍՇ-ում (տե՛ս Համապատում, էջ 156. հմմտ. ՊՍՇ, էջ 123—124)։

11 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, էջ 82—84։ Նույնի՝ Պյոնիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ, էջ 172։ Հ. Ա. Կնյազյան. Նշվ. աշխ., էջ 63—65։ Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 166։ Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под редакцией Ап. Иоаннисяна. Ереван, 1964, (այսուհետև շարադրանքի մեջ՝ АРО, I), с. LVII։ Ն. Ադոնցի, ապա և Ա. Գ. Մադոյանի այլակարծիք դիտողությունները չեն մոտենում խնդրի հանգույցին (Ադոնցն առհասարակ «անհեթեթ գրույց» է համարում «Պատմության» այս հաղորդումը), այդ իսկ պատճառով թերի են և անհամոզիչ (տե՛ս Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 126, 137. հմմտ. Ա. Գ. Մադոյան. Դիտողություններ Դավիթ-բեկի ազատամարտի պատմության շուրջը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 186—187, 193)։

նաև Իվան Կարապետը) ժամանել է Ղափան Բարգուշատի և Նախիջևանի խանների երկկողմանի հարձակումից հետո[12], իսկ Տեր-Ավետիքը նկարագրում է դրանից առաջ կայացած զարաբաղցիների ռազմարշավը (տե՛ս ՊՏԱ, էջ 132—134)։ Այս հակասությունը նկատել է Ա. Գ. Աբրահամյանը, բայց մեկնակետ ունենալով երկու արշավանքների նշված նույնացումը, «Պատմության» տվյալներն անտուրդ է համարել[13]։ 2. Ինչպես գիտենք, Դավիթ-բեկը գրավում է Որոտնա բերդը 1724 թ. մարտի 29-ին, որից հետո (մինչև ապրիլի 4-ը) Ղափանի զինված ուժերը խոշոր պարտություն են կրում Զավընդուրի ռազմաճակատում՝ Բարգուշատի և Ղարադաղի զորքերի դեմ մղած կռվում, և մեծ կորուստներ տալիս («900 այր») Սիսիանի ճակատում՝ Նախիջևանի խանի զորքերի հետ երկրորդ բախման ժամանակ։ Այդ իսկ միջոցին էլ՝ 1724 թ. ապրիլի 9-ին և 15-ին Սղնախների զորքերն օգնության են գնում Սյունիք[14]։ Սա նշանակում է, որ զարաբաղցիների ժամանման պահին Որոտնա բերդն արդեն հայերի ձեռքում էր և նրա պաշարումը «Յոհաննէսի» զորքի կողմից անիմաստ պիտի լիներ: 3. Իվան Կարապետի 1724 թ. հուլիսի 18-ի զեկուցագրից երևում է, որ նույն թվականի ապրիլին Ղարաբաղից եկած զորքը Ղափանում ռազմական գործողություններ գրեթե չի ծավալել և, համոզվելով երկրի հարաբերական կայունության մեջ, շուտով ետ է վերադարձել։ Կացությանն ավելի մոտից ծանոթանալու նպատակով, ընդամենը 290 հոգուց բաղկացած շոկատով, Ղափանում է մնացել Իվան Կարապետը։ Զեկուցագրում ոչ մի ծանուցում չկա զարաբաղյան զորաբանակի կողմից Տեր-Ավետիքի նշած Որոտնա բերդի պաշարման, Շնհերի և Տաթևի այցելության մասին (տե՛ս APO, II, док. 277):

Այսքանով պարզ է դառնում, որ Տեր-Ավետիքի պատմածը՝ Ղարաբաղի հայոց զորաբանակի Սյունիք գալու մասին, ոչ մի առումով չի վերաբերում 1724 թ. ապրիլի 9-ի և 15-ի նմանօրինակ անցքերին։ Միաժամանակ անընդունելի է այդ հաղորդումը մտացածին և բռնազբոսիկ համարելը. «Յոհաննէսի» և իր զորքերի գործողությունների նկարագրությունը տրամաբանական, ներդաշնակ ու ամբողջական կառուցվածք ունեցող դեպքերի մի շարան է, որը սերտորեն շաղկապվում է ՊՏԱ-ի ընդհանուր դիպաշարի հետ, իսկ Տեր-Ավետիքի տեղեկությունների հավաստիության աստիճանը մեզ հայտնի է։ Ավելին, հենց իր՝ պատմողի ճակատագիրն է տրամախաչվում «Յոհաննէսի» բանակի սյունյաց ռազմարշավի հետ, ուստի Տեր-Ավետիքի այս հաղորդումն առավել ճշմարտապատում բնույթ է ստանում։

Եզրակացությունը միակն է. նախքան 1724 թ. ապրիլի արշավանքը եղել է զարաբաղյան, ըստ երևույթին, ավելի մեծ զորաբանակի մեկ այլ անցում Ղափան, որի (ինչպես և 1720-ականների սյունյաց ընդվզման գրեթե ողջ պատմության) մասին մեզ հասած միակ սկզբնաղբյուրը «Ղափանցվոց պատմությունն» է։ Ուրեմն, ե՞րբ և ի՞նչ պայմաններում է տեղի ունեցել այս անցումը:

«Պատմության» տվյալներից դատելով, կարող ենք մակաբերել միայն, որ այն կայացել է 1723 թ. ապրիլի Զավընդուրի հաղթանակից մինչև Ղարաչիմեն բանակատեղիում Ղափանի հայոց զորքերի կենտրոնացման պահն ընկած ժամանակահատվածում (տե՛ս ՊՏԱ, էջ 132—133)։ Այս հարցին առավել սպառիչ պատասխանելու համար սկզբից անդրադառնանք «Յոհաննէսի» բանակի թվին՝ 56 հազար «հայագոնդ զորքին» (ՊՏԱ, էջ 133, հմմտ. Համապատում, էջ 152)։

Աշ. Հովհաննիսյանն այս թիվը համարում է «ֆանտաստիկ» (APO,

---

[12] Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под редакцией Аш. Иоаннисяна. Ереван, 1967 (այսուհետև շարադրանքի մեջ՝ APO, II), док. 277, с. 184:

[13] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 83։

[14] «Պատմա-բանասիրական հանդես», 1939, № 3, էջ 131—132։

I, c. LVII): Աշ. Աբրահամյանն, իր հերթին, գրում է, թե «Ընտիր պատմության» հեղինակը ... թույլ է տվել երկու անճշտություն. Դիզակի Ավան-յուզբաշուն դարձրել է գուգարքեցի և Ղարաբաղի 2000 հոգուց բաղկացած զորաբանակի թիվը մեծացնելով հասցրել է 56 000-ի»[15]։

Այս տեսակետի ելակետը Սղնախների վերը նշած երկու տարբեր սյունյաց արշավանքների անհարկի նույնացումն է։ Պիտի նկատել, սակայն, որ 1720-ականներին Ղարաբաղի հայոց զորքի ընդհանուր քանակի մասին ժամանակակիցների մեզ հասած մի շարք տեղեկություններ մոտ են Տեր-Ավետիքի հաղորդած 56 000 թվին։ Այսպես, 1723 թ. վերջին տարբեր վայրերից՝ Ղարաբաղից և Արդեբիլից, ռուսների գրաված մերձկասպյան շրջաններր ժամանած Անտոն քահանան և Ծատուր Պետրովը Սղնախների զորքը հաշվում են 50 000՝ 30 000 հեծյալ և 20 000 հետևակ[16], 1723 թ. օգոստոսի 26-ին Ալեքսեյ Մակարովին հղած զեկուցագրում Մինաս վարդապետ Տիգրանյանը հայ զինվորության թվաքանակը նույնպես 50 հազար էր գնահատում[17]։ Հետաքրքիր է, որ 1723 թ. հայոց զորքի քանակը 60 000 են համարել օսմանցի պաշտոնյաները. Պետրոս դի Սարգիս Գիլանենցը պատմում է, թե 1723 թ. ապրիլի 2-ին Թուրք դեսպանը գնում է էջմիածին և՝ «մին էլ մեր կաթուղիկոսին կասի՝ թէ դու էլ մեծ սուլի (հանցանքի—Ա. Ա.) տէր աս, որ Ռուստին խետ մին աս դառցէլ, էսչանք խայ աս կանգրնացուցէլ՝ որ ասում ան՝ թէ ԿՌ (60 000) խայ եարաղով հազիր ան»[18]։ Մի ուրիշ տեղ Գիլանենցը նշում է. «...և մեր հայոց ասկարն որ բոլորվել ան՝ ասում ան՝ թէ ԿՌ (60 000) մարդ այ...»[19]։ 1726 թ. հունիսի վերջին Ղարաբաղից Բաքու ժամանած Սիմեոն Բալասանովը հայտնում է ռուսներին, որ Սղնախներում 60 000 զորք կա[20]։

Հիրավի, վերոբերյալ տվյալների կողքին 56 հազարանոց «հայագունդ զորքի» մասին Տեր-Ավետիքի հաղորդումը բնավ էլ «ֆանտաստիկ» չի թվում. Տեր-Ավետիքը հայտնել է Մխիթարյաններին 1720-ականներին Այրարատում Սղնախների զորքերի ընդհանուր թվաքանակի մասին գոյություն ունեցող կարծիքը։ Թե իրականում որքա՞ն է եղել Ղափան անցած զորքի քանակը՝ դժվար է ասել։ Հասկանալի է, համենայն դեպս, որ 56 000-ը չափազանցված թիվ է. միաժամանակ, այս թիվը հուշում է, որ Սղնախների սյունյաց առաջին ռազմերթը իրականացվել է, իրոք, մեծաքանակ զորաբանակով։ Ասվածից աներկբա է դառնում, որ Ղափան անցած զորքի զորագլուխ «Յոհաննէսը» պատմագիտությանը հայտնի նույն Ավան-յուզբաշին է (Ղարաբաղի բարբառով Հովհաննեսը «Ավանես» է կամ Ավան)[21], որը 1726-ականներին Ղարաբաղի Սղնախների զինական ուժերի գերագույն զորահրամանատարն էր. «Հայոց մեծ իշխան Ավան ուզբաշին» (APO, II, док. 330, с. 270), «ամենեցունց պատվականայգոնեղ հայոց իշխան Ավան ուզբաշին»[22], «իշխանաշուք իշխանացագ գլուխ կարգեալ ... պարոն Աւան բէկ

---

15 Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ, էջ 172։

16 APO, II, док. 194, с. 51. Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թվականներին (նոր վավերագրեր).—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, փաստ. 2, էջ 253։

17 Г. А. Эзов. Сношения Петра Великого с Армянским народом, СПб., 1898, док. 231, с. 359.

18 «Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի».—«Կոչնակ Հայոց աշխարհին», 1863, թիվ Գ, էջ 196։

19 Նույն տեղում, էջ 209։

20 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 119։

21 Լեո. Երկերի ժողովածու (տասը հատորով). Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2. Երևան, 1973, էջ 140։

22 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 258, հմմտ. APO, II, док. 347, с. 287.

ուզբաշին»[23], «սղնախցիների պարագլուխ»[24], «հայոց զորքի տնօրեն Ավան-յուզբաշին», («армянского войска содержитель Аван Юзбаши»—տե՛ս APO, II, док. 373, с. 317)[25]:

Գալով Ն. Ադոնցի դիտողությանը, թե «Գուգարացի՝ Ղուկաս վարդապետի ենթադրությունն է, որ ներել կարելի էր, եթե Գարգարացի ասեր, համաձայն խորենացու գործածության»[26], և Ա. Մադոյանի կողմից առաջ քաշվող հիշատակարանին, ուր ասված է, որ «...մինչ երկիրս ընդ տիրապետութեամբ պարսից իշխանութեանն կայր, ի թուականիս հայոց ՌՃՀԱ (1722) էր, եկն համբաւ յայնկոյս կողմանցն Կուր գետոյն, թէ գուգարացիք (այսինքն շաքեցիք) միաբանեալ են ընդ լեռնարնակ ազգին լեզկաց՝ չծառայել բնաւին իշխանութեան պարսից...»[27],—պետք է ասել, որ այս ամենը հիմք չի տալիս ժխտելու «Յօհաննէսի» և Ավան-յուզբաշու նույնացումը, ինչպես որ դա անում են Ն. Ադոնցն ու Ա. Մադոյանը։ Ընդհակառակը, կարելի է նույնիսկ պնդել, որ «Գուգարքի» հասկացումը որպես «Գագուրք» և վերոգրյալ հիշատակարանի պարզաբանումը («Գուգարացիք՝ այսինքն շաքեցիք») գալիս են ապացուցելու ոչ թե այն եզրահանգումը, ըստ որի «Հովհաննեսն այն Ավանն է, մինը չորս կտրիճ երիտասարդներեն, որ զենքով դիմադրեցին լեռնականներին Ջրաբերդում»[28], այլ լրացուցիչ կռվան են ընձեռում «Յոհաննէսի» և Ավան-յուզբաշու նույն անձնավորություն լինելը հաստատելու համար։ Փաստարկը հետևյալն է. Շաքին մտնում էր Շիրվանի վիլայեթի մեջ[29], իսկ մեզ հայտնի է, որ հենց Շիրվանից էր Ավան-յուզբաշին Ղարաբաղ տեղափոխվել։ Դեռ ավելին, ըստ ավանդության, Ավանը ծնվել է Շաքիում՝ Նուխի գավառի Ավան կամ Ավանդամ գյուղում, որտեղ որոշ ժամանակ ապրել է նրա ընտանիքը[30]։ Ավելի խոսուն է այն փաստը, որ ժամանակակիցները Ավան-յուզբաշուն և Շիրվանից Ղարաբաղ անցած նրա զինակիցներին անվանել են «շիրվանցիներ», «Շիրվանայ տղէք» (տե՛ս APO, II, док. 278, с. 187—188)[31]։ Այսպիսով, եթե տրամաբանորեն զար-

---

23 APO, II, док. 228, с. 85: Այս վավերագրի ռուսերեն համառոտ թարգմանության մեջ կարդում ենք. «Письмо одного архимандрита главного... к собранию армянскому к главному юзбаше Авану партикулярно (նույն տեղում, էջ 86)։

24 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 159։

25 Ավան-յուզբաշու մասին տե՛ս П. Т. Арутюнян. Указ. соч., с. 234—238, և APO, I, с. XL—XLIII: Պետք է նշել, որ Աշ. Աբրահամյանն Ավանին սխալ կերպով անվանում է Դիզակի յուզբաշի (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 269։ Նույնի՝ Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման..., էջ 172)։ Նրան հետևելով, սխալը կրկնում է Ա. Մադոյանը (տե՛ս Ա. Գ. Մադոյան. նշվ. աշխ., էջ 193)։ Մինչդեռ, Ավան-յուզբաշու նրստավայր Քարագլխի կամ Շոշվա-զալա սղնախը գտնվում էր Վարանդայում (տե՛ս APO, I, с. XXXIX—XLI):

26 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 126 (ընդգծումը Ն. Ադոնցինն է)։

27 Տե՛ս Ա. Գ. Մադոյան. նշվ. աշխ., էջ 186. տե՛ս նաև Նյութեր հայ մելիքության մասին, Ա պրակ, Առաքել վարդապետ, Դիզակի մելիքությունը. Վաղարշապատ, 1913, էջ 14։

28 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 126։

29 Tadhkirat al-Muluk. A Manual of Safavid Administration, translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 102; հմմտ. И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв. Ленинград, 1949, с. 117, 144.

30 Տե՛ս П. Т. Арутюнян. Указ. соч., с. 234—235:

31 Հարկ է հիշել, թերևս, որ Խոսրով Օրին Շաքիի հայ զինվորության նվազագույն թվաքանակը 10 000 էր համարում, մինչդեռ, օրինակի համար, ըստ նույն հաշվարկի, Ցիսիան

գացնենք Ն. Ադոնցի և Ա. Մադոյանի առաջարկած հավասարեցումը, կըստանանք հետևյալ բանաձևը. գուգարացիներ=գարգարացիներ (դա.գուրացիներ)—շաքեցիներ=շիրվանցիներ։ Այսինքն, «Յօհաննէս պետն Գուգարացւոց» նշանակում է՝ շիրվանցիների զորապետ Ավան-յուզբաշի։

Ինչևէ, անկախ այս նոր ենթադրության հավաստիության աստիճանից, կասկածից դուրս է, որ 1720-ականներին Ղարաբաղյան 56 000-անոց հայկական բանակի զորահրամանատար կարող էր հիշվել միմիայն Ավան-յուզբաշին։ Հիշատակված վավերագրերից մեկում հենց նա է ոչղակիորեն նշված Հայոց Սղնախներում կենտրոնացած 30 000 հեծելազոր և 20 000 հետևակի գլխավոր հրամանատար։ Նկատի ունենալով այդ փաստաթղթի զանազան տեղեկությունների կարևորությունը մեր հետագա հետազոտության համար, այն, հատվածաբար, ներկայացնում ենք ստորև. 1723 թ. նոյեմբերի 26-ին Անտոն քահանան Բաքվի ռուսական իշխանություններին հայտնում էր.

«Был он под городом Генжею назад тому с месяц, и в то время приступало ко оному городу турецкое войско, где был бой з 20 дней и слышно было, что турок было тамо с 80 000 и разорили за городом армянские слободы и многих армян побили, а других взяли в полон, чего ради за полонных посланы были от армянского войска юзбаши к турецкому Ибранм паше говорить, для чего они, турки армян разоряют, понеже де им велено оной город Генжю взять, а не их армян разорять, и Ибраим паша тех армян взятых в полон освободил, а потом турецкое войско ис под Генжи возвратилось в Тефлис, а нс Тефлиса будто турецкое войско роспущено по домам, толко де осталось в Тефлисе с 4000... Армянского войска ныне в собрании в горе имянуемой Согнате, а имянно конницы блиско 30.000, до пехоты блиско 20.000, которое войско разстоянием от города Генжи один день.

Командир при оном войске обретаеца юзбаша Аван, а намерение их иттить в Копанской уезд для того, что ис Копанского уезду приходили от армян же к юзбаше Авану, чтоб он с своим войском шел и соединился с ними. Шахово величество молодой ныне обретаегца в Ардивиле, а войска сказывают при дворе ево токмо с пять или с 6000, а намерен иттить в Реван. Да видел же он шахова войска в собрани у деревни Хадруда, блиско армянскова войска, с которыми у армянскова войска был бой (ибо подъезд с подъездом съехалися) и от шахова войска убито 6 человек, а от армянскова войска один юзбаша ранен и сказывают, что шахова войска было при деревне Хадруд с 40.000 или больше, а при оном войске был главным командиром Залханов сын, а другой Муганской хан н от той деревни с войском ушли ночью, а слышно де было что пошли де к Худа Фарунову мосту, а вышеописанной бой был у них прошедшаго октября 20 дня [1]723 году» (АРО, II, док. 194, с. 51—52).

Այս փաստաթղթից երևում է, որ մինչև 1723 թ. հոկտեմբերի վերջը Սղնախները, թեև ստացել էին զափանցիների խնդրանքը, բայց դեռ չէին արշավել Սյունիք (այլապես այդ մասին տեղյակ կլիներ Անտոն քահանան, որը հոկտեմբերի 20-ին տակավին Ղարաբաղում էր՝ Հագրութում)։ Փաստորեն, նրանք չէին էլ կարող նման քայլի դիմել, քանի դեռ Ղարաբաղի հյուսիս-արևելյան սահմաններին՝ Գանձակի մերձակայքում, 20-օրյա կատաղի մարտերում օսմանյան բազմահազարանոց բանակը[32] չախչախիչ պարտություն չէր կրել։

«նահանգը» տալու էր 6000 զինվոր (տե՛ս Г. А. Эзов. Указ. соч., с. 35—36; հմմտ. Լեո։ նշվ. աշխ., էջ 56)։

32 Տարբեր վավերագրերում օսմանյան բանակի թվաքանակը նշվում է 40-ից 80 հազար զինվոր (տե՛ս АРО, II, док. 190, 194, 195, 237, 243, с. 46, 51, 53, 97, 104. տե՛ս նաև А. Г. Абрамян. Документы из истории совместной борьбы народов Закавказья против турецких агрессоров в первой четверти XVIII века.—«Պատմա-բանասիրական», հանդես», 1964, № 2, էջ 245—248)։

Ե՞րբ է տեղի ունեցել Գանձակի ճակատամարտը։ Աշ. Հովհաննիսյանի նախնական կարծիքով՝ 1723 թ. հունիսին (տե՛ս APO, I, c. LXVI)։ Հետագայում նա թվագրել է Գանձակի 18—20-օրյա դիմադրությունը 1723 թ. ամռան ամիսներով[33]։ Պ. Հարությունյանը նշում է, որ այս ճակատամարտը եղել է 1723 թ. աշնանը[34]։ Ըստ Աշ. Աբրահամյանի, Թուրքական բանակը Թիֆլիսից շարժվել է Գանձակ 1723 թ. հոկտեմբերի սկզբին, իսկ գրոհը քաղաքի վրա սկսել է հոկտեմբերի 9-ին[35]։ Ցավոք, երեք գիտնականներն էլ իրենց տեսակետը որևէ կերպ չեն հիմնավորում կամ բացատրում։

Վերոբերյալ վավերագրում Անտոն քահանան բավականին հստակ է նշում Գանձակի պաշտպանության ժամանակը. նոյեմբերի 26-ին ժամանելով Բաքու, նա հայտնում է, որ մեկ ամիս առաջ ինքը եղել է Գանձակի մոտակայքում և հենց այդ օրերին էլ Թուրքական բանակը փորձել է գրավել քաղաքը, այսինքն՝ խոսքը 1723 թ. հոկտեմբերի մասին է[36]։ Նույն իրողությունն են հուշում նաև Գանձակի մարտերի մասին մեզ հասած թվագրված վավերագրերը, որոնք բոլորն էլ գրված են 1723 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին[37]։ Այս ճակատամարտի մասին առաջին արձանագրությունը գտնում ենք Պետրոս I-ին Սղնախների քաղաքական ղեկավար շրջանակի 1723 թ. նոյեմբերի 1-ին հղված նամակում. «...օսմանցին եկն, Վրաց տուն առավ, և եկն մինչև ի Գանջայ, Ի (20) օր ծեծեց զքաղաքն և դարձաւ...» (APO, II, док. 192, 193, с. 48, 50)։ Քանի որ բոլոր աղբյուրները ճակատամարտի տևողությունը նշում են 18—20 օր[38], հնարավոր է, որ Աշ. Աբրահամյանը 1723 թ. նոյեմբերի 1-ի նամակի[39] ժամանակի հաշվառումով է փորձել պարզել Գանձակի վրա օսմանյան բանակի գրոհի սկիզբը, այսինքն, նոյեմբերի 1-ից հանել է 20 օր և ստացել է հոկտեմբերի 9-ը։ Պարզ է, սակայն, որ նոյեմբերի 1-ի նամակը Պետրոս I-ին կարող էր գրվել ոչ միայն ճակատամարտի ավարտի հաջորդ օրն իսկ, այլ նաև՝ որոշ ժամանակ անց։ Այսպես ենք ասում, որովհետև Անտոն քահանայի հաղորդած՝ հայկական և պարսկական զորաջոկատների միջև 1723 թ. հոկտեմբերի 20-ին Հադրութի մոտ տեղի ունեցած միջադեպը վկայում է, որ Գանձակի համար մարտերը շարունակվել են առ առավելն մինչև 1723 թ. հոկտեմբերի 20-ը։ Դեպքի նկարագրությունից միանգամայն պարզ է, որ պարսկական զորաբանակը Ղարաբաղ ներխուժելու դիտավորություն չուներ. տեղի ունեցածը պատահական կարճատև ընդհարում էր հայկական և պարսկական զորքերի առաջապահ ջոկատների միջև՝ «ибо подъезд с подъездом съехалися»[40]։ Պար-

33 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 155։

34 П. Т. Арутюнян. Указ. соч., с. 170.

35 А. Г. Абрамян. Документы из истории..., с. 244.

36 Ուշադրավ է, որ նույն կապավորը 1723 թ. օգոստոսի 17-ին առհասարակ չի խոսում Գանձակի համար իրը մղվող կամ արդեն մղված մարտերից, ընդհակառակը, նա հաղորդում է, որ այդ ժամանակ «Գանձակում ոչ մի թուրք (իմա՝ օսմանցի—Ա. Ա.) չկար» (APO, II, док. 188, с. 44)։

37 Տե՛ս APO, II, док. 192—193, 194, 195—196. Եղիա Կարնեցու դիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968, փաստ. 121, 124, 137։

38 Բացի արդեն նշված վավերագրերից տե՛ս նաև Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 137։

39 Աշ. Աբրահամյանը 1964 թ. (իր հոդվածի դրման պահին) այս փաստաթղթին կարող էր ծանոթ լինել Կ. Եղյանի ժողովածուից.— տե՛ս Г. А. Эзов. Указ. соч., док. 232.

40 Այս ընդհարման ժամանակ 6 սպանված պարսիկ զինվորների թիվը «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակում, անհասկանալի պատճառներով, հասցվել է 2000-ի (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 150)։ Ընդ որում բազմահատորյակում այս առթիվ հղված են «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակում» ժողովածուի № 194 և 195 վավերագրերը (տե՛ս APO, II)։ Առաջինի տվյալները մեզ հայտնի են, իսկ № 195 վավերագրում Հադրութի մոտ տեղի ունեցած «ճակատամարտի» մասին ակնարկ իսկ չկա։

սից զորքը գնում էր դեպի Խուդաֆերինի կամուրջը, անշուշտ, նպատակ ունենալով անցնել այն և միանալ Ատրպատականում դեգերող շահ Թահմասպ II-ի փոքրաթիվ ուժերին[41]։ Սա նշանակում է, որ օսմանցիները, Գանձակի ճակատամարտը տանուլ տալուց հետո, մինչև հոկտեմբերի 20-ը արդեն իսկ ետ էին դարձել, այլապես անհասկանալի կլիներ թուրքական վտանգն իր թիկունքում թողած պարսկական խոշոր (ըստ Անտոն քահանայի՝ 40 000-անոց) բանակի շարժումը դեպի Խուդաֆերինի կամուրջը։ Այսպիսով, եթե նկատենք, որ Գանձակի պաշտպանությունը տևել է 18—20 օր, ընդունելու ենք, որ թուրքերի գրոհը Գանձակի վրա սկսվել է 1723 թ. սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի առաջին օրերին։

Որպեսզի պարզ լինի օսմանյան բանակի կրած պարտության և դրանից բխող քաղաքական հետևանքների ամբողջական պատկերը, մեջբերենք ժամանակակիցների մի շարք վկայություններ։ Անտոն քահանայի վերը բերված տեղեկություններից մեկի համաձայն, Գանձակի մատույցներից Թիֆլիս վերադառնալուց հետո օսմանյան բանակի մեծ մասը ցրվում է տնեերով։ 1723 թ. դեկտեմբերի 20-ին Շամախիից Ալեքսան քահանան այդ մասին գրում էր. «Կանչու վերայ փախան հոռմեցիքըն (իմա՝ օսմանցիները— Ա. Ա.)։ ԹՌ (9000) մարդ էր կոդօրվէլ[42]։ Գնացին Թիֆլիզ, կեսըն մնացին Թիֆլիզ, կեսըն գնացին Ըսդանպոլ, որ արդ անէն իւրեանց խոնթքարին, էլ շադ ղօշուն վեր առնէն, եազբաշի կան, որչափ որ երկիր կայ, առնուն» (АРО, II, док. 195, 196, с. 53, 55)։ 1723 թ. դեկտեմբերի 5-ին (հին տոմարով՝ նոյեմբերի 24-ին) Եղիա Մուշեղյան Կարնեցին նամակ է ստանում շահ Թահմասպ II-ի գործերի կառավարիչ Միրզա Ալինաղիից, ուր ասված էր. «Օսմանցու էհուալն՝ էն ժամանակն որ Գանձակու յերկրին վրա որ եկել էյին, որ Գանչա բռնեն, քաղաքացոց և օսմանցոց մեջն 7 անգամ կռիւ անկաւ, ամէն անգամ օսմանցին կոտր կերաւ։ Նրանց թօփխանան պարսից ձեռ անկաւ։ Եօթն կովումն էՌ (7000) մարդ օսմանլուքցն կոտորվիլ է։ Էն ժամումն Մահմատ ղուլի խանն էլ հասել է։ Էբզրմա Իպրահիմ փաշան ամա՜ն են կանչել և փախել...»[43]։ 1723 թ. դեկտեմբերի 25-ին (հին տոմարով՝ դեկտեմբերի 14-ին) Եղիա Կարնեցին մի գրություն է ստանում Աստառայի «սպառապետ» (սարդար) Մուստաֆա խանից, որտեղ նույն դեպքերի մասին ասված էր. «...բարձր բանակիցն խապար հասաւ թէ՝ մեծ աստիճանաւոր թագաւորն, որ է թագաւորն օսմանցոց, բարիշութեան հիմ գրել է և բարեկամութիւն և բնական սահմանքն որպէս որ կար այնպէս կապել են, և նրա զորքն, որ Գանճա կոտորվել էյին և կորել էյին, մնացած զորքն ամէն տեղաց յետ է գարձուցել և բարեկամութիւնն նորել և ամուր են արել»[44]։ 1723 թ. վերջին Կ. Պոլսի Վենետիկի դեսպանը ծանուցում էր, որ Գանձակի համար մղված ճակատամարտում Իբրահիմ փաշան ծանր պարտություն է կրել, զոհ տալով իր 50 000-անոց զորաբանակի երկու հինգերորդը[45]։

Բերված տվյալներից պարզվում է, որ Գանձակի պարտությունից հետո

---

41 1723 թ. հոկտեմբերի 20-ին Հաղբության մոտով անցած պարսկական բանակի առաջնորդներից մեկին՝ Մուղանի խանին, հաջորդ տարվա գարնանը տեսնում ենք Խոյում տեղակայված Թահմասպին հավատարիմ զորքերի հրամանատարի պաշտոնում (տե՛ս Армянское войско в XVIII веке (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. Ереван, 1968, док. 3, с. 102)։ Թուրք պատմագիր Չելեբի-Զադեի հաղորդած տեղեկություններից պարզվում է նաև Մուղանի խանի անունը՝ Սեֆի-Կուլի խան (տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 157)։

42 Աշ. Աբրահամյանը կարծում է, որ այս թիվը կարելի է կարդալ և ԲՌ (2000) մարդ (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 144)։

43 Եղիա Կարնեցու դիվանը, փաստ. 121, էջ 229։

44 Նույն տեղում, փաստ. 137, էջ 249։

45 M. L. Shay. The Ottoman Empire from 1720 to 1734. As Revealed in Despatches of the Venetian Baily. Urbana, 1944, p. 111.

օսմանյան վտանգը Սղնախների համար առժամանակ վերանում էր: Ղարաբաղի հայ զինվորությունը իրեն այնքան վստահ է զգացել, որ նույնիսկ պահանջել է Իբրահիմ փաշայից հայ գերիներին ազատ արձակել, և սա էլ, հաշվի նստելով ուժերի ստեղծված իրական հարաբերակցության հետ՝ կատարել է Սղնախների պահանջը (տե՛ս Անտոն քահանայի վերը բերված տեղեկությունները):

Պարսից ուժերի կողմից նույնպես սպառնալիք չկար, ընդհակառակը՝ սրանց և Սղնախների միջև դաշնակցության եզրեր գտնելու միտում էր նկատվում. 1723 թ. հուլիս—օգոստոսին Սղնախների մի զորաջոկատ Հաջի Դավութ խանի առջև փակում է Գանձակ տանող ճանապարհը և թույլ չի տալիս անցնել Կուր գետը. «И хотел итти... Даудбек по другой стороне Куры для взятья Генжи и армянское войско до Генжи онаго Даудбека не допустили и ныне он стоит на Куре с войском своим з двемя тысячи человеки» (АРО, II, док. 188, с. 44): Նույն վավերագրում կա նաև չափազանց հետաքրքրական մի տեղեկություն. «А сын шахов (իմա՝ Թահմասպ II-ը—Ա. Ա.) живет в Тевризе с войским своим з десяти тысячи, а к походу он никуды не намерен, только де пишет ко армянскому войску з дружелюбием и повелевает ежели де сколько вашей мочи будет, то побейте лезгинцов Даудбеково войско, только де моего войска людей не трогайте» (Նույն տեղում):

Այս փաստերի վերլուծությունը բերում է հետևյալ եզրահանգման. Թիֆլիսի անկումով (1723 թ. հունիս)[46] օսմանցիների կողմից ամբողջ Այսրկովկասի ռազմակալման վտանգն ահագնացել էր. օսմանյան բանակի (որի առաջնահերթ խնդիրն այժմ արդեն Գանձակի գրավումն էր) և նրա դաշնակից Դաղստանի լեռնականների գործողությունների ծավալումը հավասարապես սպառնում էր և՛ Ղարաբաղի հայոց Սղնախներին, և՛ Գանձակի պարսկական իշխանություններին: Հակաօսմանյան այս երկու ուժերի միջև առաջացավ ընդհանուր շահերի որոշակի շրջանակ, որի հետևանքով էլ 1723 թ. երկրորդ կեսի ընթացքում Ղարաբաղի հայության բռնած դիրքը շահ Թահմասպ II-ի արքունիքի կողմից չէր դիտվում որպես բացահայտ հակապարսկական խոովություն:

1723 թ. Գանձակի պաշտպանությանը, մահմեդական և վրացական պարսկամետ ուժերի հետ միասին, մասնակցում էին ոչ միայն քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակիչները, այլև Ղարաբաղի հյուսիսային Սղնախների զորամասերը[47]: Աշ. Հովհաննիսյանն իրավամբ նկատում էր, որ Սղնախների հայ զինվորության և Գանձակի խանական ուժերի միջև 1724 թ. մարտի 24-ին կնքված պայմանագիրը վավերացումն էր, փաստորեն, այն համագործակցության, որ իրականացավ 1723 թ. «Գանձակի ու մերձակա շրջանների մուսուլման և քրիստոնյա բնակչության համատեղ դիմադրությամբ»[48]: Այս փաստը հատուկ նշանակություն է ձեռք բերում, երբ նկատում ենք, որ թուրքական վտանգը միայն ժամանակավորապես էր մերացել: Մի շարք փաստաթղթեր նշում են, որ Գանձակի պարտությունից հետո թուրքերը պատրաստություններ էին տեսնում վերադառնալու և «վրեժխնդիր լինելու» համար՝ «и готовятся паки на нас для отмщения победы нашей»— գրում էին գանձակեցիները[49]: Ուստի և, Ղարաբաղի հայոց

---

46 АРО, I, с. LIII. Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 148:

47 АРО, I, с. LXVI—LXVIII. Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 155:

48 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 155:

49 А. Г. Абрамян. Документы из истории..., с. 246, 247, 248. Հմմտ. АРО, II, док. 190, 237, с. 46, 97: Թվում է, վերջին երկու վավերագրերը ժողովածուում (АРО, II) ժամանակագրորեն ճիշտ չեն դասավորված (առաջինի ժամանակը նշված է 1723 թ. ամառը,

Սղնախների և Գանձակի մահմեդական ուժերի միջև 1723 թ. հոկտեմբերին իր հաղթական արդյունքները տված դաշնակցությունը պիտի գոյատևեր ու իր վավերագրական արտահայտությունը ստանար 1724 թ. մարտի 24-ի պայմանագրում[50]։

երկրորդինը՝ 1724 թ. սարտը)։ Աշ. Հովհաննիսյանը ծանոթագրում է, որ № 190 վավերագիրը թվագրելիս հաշվի է առել Երևանի գրավման ժամանակը (տե՛ս APO, II. c. 344, прим. 109): Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչո՞ւ է այս վավերագիրը ժողովածուում հայտնվել 1723 թ. ամռան թվագրությունով (թեկուզ և «ամառը» գրված է հարցականով), չէ՞ որ օսմանցիները գրավել են Երևանը 1724 թ.։ Այստեղ, սակայն, էականն այլ բան է. նշված երկու վավերագրերն էլ հստակ գրում են, որ «Երևանի նահանգում» ավերածություններ անելուց հետո էլ օսմանյան 70 000-անոց բանակը շարժվել Գանձակի վրա. «...повелитель турской... учинил на страну нашу воинское нападение, в провинции Иреванской разорил христианскую церковь, Святые Троицы и пресек христианскую веру, а из наших мечетей зделал конюшни, и *после того* прислал семьдесят тысяч войска с пашами, с артиллериею и с пушками и с бомбами для взятья города Генжи» (APO, II, док. 190, с. 45, 46. հմմտ. док. 237, с. 97). 1723 թ. նոյեմբերի 1-ի հիշյալ նամակում նույնպես խոսվում էր Ս. Էջմիածնի Աթոռի, վանականների և վանքերի ծանր կացության մասին (APO, II, дек. 192, 193, с. 49, 50)։ Հետևապես, նկարագրված դեպքերը «Երևանի նահանգում» եղել են մինչև 1723 թ. հոկտեմբերի Գանձակի ճակատամարտը և ոչ մի կապ չունեն 1724 թ. իրադարձությունների հետ։ Թվանդակությունից դատելով № 190 և 237 վավերագրերը պետք է գրված լինեն 1723 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին։

50 Այդ զինակցությունը գործում էր նաև 1725 թ. (տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ադիլոյան. նշվ. աշխ., փաստ. 13, էջ 261. APO, II, док. 304, 310, 312, с. 221, 222, 236, 241, 243)։ Ժողովածուում (APO, II) № 304 վավերագիրը թվագրված է 1724 թ. աշունով։ Սա ակնհայտ թյուրիմացություն է. վավերագրում հիշատակվում է 4700 հոգուց բաղկացած թուրքական զորաբանակի ջարդը Վարանդայում և նշված է այդ հաշող գործողության օրը՝ մարտի 1-ը (տե՛ս նույն տեղում, էջ 221, 222)։ Արդ, 1725 թ. մարտի 10-ին գրված № 309 և 310 վավերագրերից հաստատապես իմանում ենք, որ հիշյալ դեպքը տեղի է ունեցել 1725 թ. մարտի 1-ին (տե՛ս նույն տեղում, էջ 234, 236)։ № 304 վավերագրում նշված է նաև, որ Վարանդայի հաղթանակի մասին մանրամասնությունները բերված են մեկ այլ նամակում։ Հետևաբար, № 304 վավերագիրը, № 309 և 310 վավերագրերի (որտեղ և բերված են այդ մանրամասնությունները) հետ միասին, ուղարկվել է 1725 թ. մարտի 10-ին կամ դրան հաջորդած մոտ օրերից որևէ մեկին։

Մեկ ճշգրտում ևս։ Նույն դեպքի մասին հայտնում է նաև Իվան Կարապետը՝ կոմս Պ. Տոլստոյին հղված 1725 թ. մայիսի 11-ի իր զեկուցագրում (APO, II. док. 312, с. 241—243)։ Նրա պատմածի մեջ, սակայն, որոշ նորություններ կան, ինչպես, օրինակ, տվյալներն այն մասին, որ Վարանդայի ջարդից հետո հայերը 200 սպանված թուրք զինվորների գլուխներ ընծա են ուղարկել շահ Թահմասպ II-ին (իսկ նա, ի պատասխան, Սղնախների գլխավոր զորահրամանատարներին մի-մի «կաֆտան» է նվիրել), որ Թահմասպը զորք է հավաքել և պատրաստվում է կռիվ տալ աֆղանների դեմ, որ թուրքերը մտադիր են Երևանից արշավել Գանձակի վրա. որ գեներալ Մատյուշկինը Սագրադ (Ստրատ) Սերգեև անունով մի սուրհանդակ է Սղնախներ ուղարկել և այլն։ Ահա այս նոր տեղեկություններն էլ ռուսաց արքունիքի պաշտոնյաները հարկ են համարել ներկայացնել առանձին համառոտ զեկույցով, որը և ժողովածուի խմբագրությունը սխալմամբ թվագրել է 1724 թ. հունիսի 23-ով (APO, II, док. 253, с. 114—115)։ Այստեղ թույլ է տրված երկու անճշտություն. 1) իրականում նամակը գրվել է 1725 թ. և ոչ 1724-ին. 2) նամակը, որի հիման վրա կազմվել է հիշյալ զեկույցը, գրվել է մայիսի 11-ին և զինվորական փոստով Թաֆվից Մոսկվա է ուղարկվել հունիսի 23—24-ին («Получено при доношении генерал-лейтенанта господина Матюшкина № 14 из Баки от 23 нюня»): Ասվածի հետ մեկտեղ պետք է նշել նաև, որ ժողովածուի առաջարանում ճիշտ չի մեկնաբանված № 253 վավերագրի հետևյալ հաղորդումը. «Армяне по учиненном поиске над турками пристают к стороне персицкой и послали к шаху двести голов и идут с персиянами на время помиритпа пока дождутся помощи российской»: Այս հաղորդումը նկատի ունենալով և ընդունելով վավերագրի սխալ թվագրությունը (1724 թ. հունիսի 23), Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ 1724 թ. մարտին Գանձակի մա-

Գանձակ-Ղարաբաղի տարածաշրջանում հայ-մահմեդական զինյալ դաշինքի առկայությամբ և օսմանյան բանակի շախշախումով նվազում էր նաև Դաղստանի լեռնականների կողմից ներկայացող վտանգը: 1724 թ. մայիսի 29-ին Մոսկվայում ստացված (այլ ոչ այդ օրը գրված, ինչպես նշված է ժողովածուում) նամակում Մուհամմադ Կուլի խանը ընդգծում էր, որ քանի դեռ օսմանյան զորքերը կրկին չեն երևացել այդ կողմերում, լեզգիներն անորոշ ու անգործունյա վիճակի են մատնված (APO, II, док. 244, с. 107):

Այսպիսով, 1723 թ. հոկտեմբերի վերջից Ղարաբաղի հայոց Սղնախները առժամանակ զերծ էին մնում արտաքին սպառնալիքներից:

Այս հենքի վրա դիտելով Սղնախների քաղաքական և ռազմական պարագլուխների՝ 1723 թ. նոյեմբերի 1-ի ուղերձը Պետրոս I-ին, հանգում ենք մի շարք հետևությունների. ա) Նամակում կարդում ենք. «Ի չորից կողմանց Թշնամիք մեր յարուցեալ կան ի վերայ մեր ... զի մէկ դիմաց օսմանցին եկն, Վրաց տուն առաւ, և եկն մինչև ի Գանջայ, Ի (20) օր ծեծեց զքաղաքն և դարձաւ. և մէկ դիմաց Պարսից, մնացեալքն փոյթ ընդ փոյթ դան ի վերայ մեր. միւս դիմաց Տաղստանցին և Լազկին ասպատակեն զմեզ» (APO, II, док. 192, с. 48; ср. док. 193, с. 50): Կարող ենք պնդել, որ արծարծված մտահոգությունները չէին վերաբերում նամակի գրման պահին՝ 1723 թ. Նոյեմբերի սկզբին Սղնախներում և նրանց շուրջը ստեղծված իրադրությանը, այլ խոսում էին անցած և գալիք վտանգներից՝ այդպես ցանկանալով շեշտել նամակագիրների ռուսական կողմնորոշումը։ Այս իրողությունը երևակում է նաև ուղերձի հետևյալ տողերում. «Ահա այս է ժամանակ զմեզ ի ծառայութիւն ստանալոյ, զի թագաւորն Պարսից յոյժ նուաղեցաւ, և ոչ իսկ երևի, և իշխանութիւն օսմանցոյն տակավին առ մեզ ոչ է հասեալ...» (նույն տեղում, էջ 48—49, հմմտ. էջ 50)։ բ) Իրենց վերապահված հարաբերական անվտանգության և կայունության ժամանակամիջոցը Սղնախները համարում էին 1—2 ամիս. «Ահա մինչև ի մէկ Բ (2) ամիսն եթէ զօրապետ և զօրք ի հրամանէ քումմէ ոչ հասանիցեն առ մեզ, այնպէս համարեսցի տէրութիւն քոյ, որ զմեզ ազգաւիմբ կբառնան ի միջոյ թշնամիք խաչին Քրիստոսի» (նույն տեղում)։

Այսպիսի գնահատականի համար, իրոք, որոշակի հիմքեր կային. 1723 թ. հոկտեմբերի 27-ին Կ. Պոլսի ռուսական ռեզիդենտ Իվան Նեպլյուևը գրում

մեդականների և Ղարաբաղի հայերի միջև հայտնի պայմանագրի կնքումից հետո երկու կողմերը շահ Թահմասպ II-ի մոտ են ուղարկում 200 հոգուց բաղկացած պատվիրակություն (APO, I, с. LXXIV): Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է. 1725 թ. մայիսի 11-ի իր նամակում (որը № 253 վավերագրի միակ սկզբնաղբյուրն է) Իվան Կարապետը, ծանուցելով 1725 թ. մարտի 1-ի թուրքական բանակի ուշնացման մեզ հայտնի դեպքի մասին, ավելացնում է. «Как это дело сделали, почили с кизилбашем мир: два сто голова послали до шаха» (APO, II, док. 312, с. 241, 243): Պարզ է, որ խոսքն այստեղ ոչ թե 200 հոգիանոց պատվիրակության, այլ 200 սպանված թուրք զինվորների գլուխները շահ Թահմասպ II-ին նվեր ուղարկելու մասին է, մի երևույթի, որը միանգամայն հարազատ էր տվյալ ժամանակաշրջանին։ Այս կամ նման դեպքի մասին էր Վախթանգ VI-ին հաղորդում Ծարիդան-բեկը 1726 թ. ապրիլին. «Сигнатцы турка трижды победили, и рубленные головы турецкие... (այստեղ երկու բառ անընթեռնելի է մնացել) к шаху привез» (տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. նշվ. աշխ., փաստ. 19, էջ 265)։ Ավելի ուշ Դավիթ-բեկը նույնպես շահ Թահմասպ II-ին ընծա է առաքում «երկու բեռինս գլխովք սպանեցելոց» (ՊՏԱ, էջ 139. հմմտ. Համապատում, էջ 173՝ «[Դավիթ-բեկը] առաքեաց Շահ-Թամաղ արքային Պարսից զչորս բեռինս գլխովք սպանելոց ի բազմութենէ կոտորածին, զորս հասուցին Օսմանցւոց»)։

Եվս երկու վավերագիր՝ № 243 և 244, ժողովածուում թվագրված են նույն սխալ մոտեցմամբ, այն է՝ փոստը Բաքվից Մոսկվա ուղարկելու (կամ Մոսկվա հասնելու—տե՛ս APO, II, док. 243, с. 104) օրը ընդունված է որպես վավերագրերի ծննդյան օր (տե՛ս APO, II, с. 104, 105; ср. APO, I, с. LXXII, LXXIII):

էր, որ թուրքերը հոխորտում են, թե ձմռանը իրենք կգրավեն Երևանն ու Թավրիզը (APO, II, док. 270, с. 153): Դեռևս նույն թվականի օգոստոս-սեպտեմբերին լուրեր էին տարածված Երևանի վրա թուրքական բանակի հարձակվելու մասին[51]։ Հարկ է նշել, որ նախքան Այսրկովկասի օսմանյան ռազմակալումը, 1720-ականների սկզբին գրված փաստաթղթերում բազմիցս շեշտվում էր Երևանի ռազմաստրատեգիական մեծ նշանակությունը. այսպես, 1722 թ. դեկտեմբերի 12-ին Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանը Մինաս վարդապետին գրում էր. «Ես յԵրևան Իրանու երկրին բանալիքն է. քեզ ևս զահիր է մեր մաթլապն (նպատակը—Ա. Ա.), այս է, որ Երևան ձեռք բերեմք, այլ Օսմանլուն և խզըլպաշն ոչ ինչ կաբել չեն պաշարում (ոչինչ չեն կարող հաղողեցնել—Ա. Ա.)»[52]։ Այս առումով մեզ ծանոթ փաստաթղթից ուշագրավ է Անտոն քահանայի այն տեղեկությունը, որ շահ Թահմասպ II-ը մտադիր է արշավել Երևան (APO, II, док. 194, с. 51): Նույն ամիսներին (1723 թ. երկրորդ կեսին) բրիգադիր Վասիլի Լևաշովը հայտնում էր, որ Թահմասպը «Երևանի պաշտպանության համար մարդ է հավաքում» (APO, II, док. 197, с. 56): 1723 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1724 թ. փետրվար ամիսը Թահմասպ II-ին գտնում ենք «Նախիջևան նահանգի Նախիջևան քաղաքում»[53], որտեղ նա, ակներևաբար, անցել էր Երևանի պաշտպանությունը ավելի մոտից կազմակերպելու մտադրությամբ։

Վերադառնանք Ղարաբաղի հայ զինվորության սյունյաց առաջին ռազմարշավի խնդրին։ 1723 թ. նոյեմբերի 26-ին շամախեցի Անտոն քահանայի Բաքվում տված տեղեկությամբ, հոկտեմբերի վերջին (երբ Անտոն քահանան դեռ Ղարաբաղում էր) Սղնախների հայոց զորքի առաջնահերթ նպատակը Ղափան արշավելն էր՝ ի պատասխան Ղափանի հայերի դիմումի։ Իվան Կարապետը, 1723 թ. դեկտեմբերի վերջին գալով Ղարաբաղ[54], այդտեղ է գտնում Ավան-յուզբաշուն և նրա զինակիցներին. մեզ է հասել Ավան-յուզբաշու ստորագրությամբ Իվան Կարապետին տրված մի վստահագիր, որը թվագրված է 1724 թ. հունվարի 5-ով (APO, II, док. 198): Այդ պահից մինչև 1724 թ. ապրիլի հայտնի օգնական արշավանքը, Ղարաբաղից Իվան Կարա ետի հաճախակի պարբերականությամբ ռուսներին հղված մանրամասն զեկուցագրերի մեջ որևէ տվյալ չկա սղնախցիների Ղափան կատարած արշավանքի մասին։ Այս ամենից եզրակացնում ենք, որ Իվան Կարապետի Ղարաբաղ ժամանելու պահին Ավան-յուզբաշու զորաբանակը Ղափանից արդեն վերադարձել էր։ Այսպիսով, Տեր-Ավետիքի նկարագրած՝ Ղարաբաղի հայոց զորքի առաջին օգնական ռազմերը Սյունիք տեղի է ունեցել 1723 թ. նոյեմբերի 1-ից (Պետրոս I-ին նամակ գրելու պահին Ավան-յուզբաշին և մյուս զորահրամանատարները դեռ Ղարաբաղում էին) մինչև 1724 թ. ընկած ժամանակաընդմիջում, առավել հավանական է՝ 1723 թ. նոյեմբերին:

Հիրավի, Սղնախները պիտի փորձեին ամեն կերպ օգտագործել 1723 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ստեղծված բարենպաստ իրադրությունը՝ օսմանյան ներխուժման նախօրեին իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Այս խնդրի իրագործման համար կարևորագույն միջոցը, թերևս, Ղափանում գործող հայ ապստամբ ուժերի հետ առավել կայուն և անմիջական կապի

---

51 «Կռունկ հայոց աշխարհին», 1863 թիվ 9, էջ 207. «Եղիա Կարնեցու դիվանը», փաստ. 112, էջ 215: APO, II, док. 267, 268, с. 143—144, 146.

52 APO, II, док. 169, 170, с. 19, 21—22; ср. док. 165, с. 9, 12, 13. Ժամանակին Իսրայել Օրին էլ էր տեղեկացրել ռուսաց ցարին, որ Երևանի բերդը դրավելով, հեշտ է տիրանալ ամբողջ երկրին (տե՛ս Г. А. Эзов. Указ. соч., с. XXXVIII):

53 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան. ձեռ. № 1915, էջ 280բ։ Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. նշվ. աշխ., փաստ. 2, էջ 253։ Եղիա Կարնեցու դիվանը, փաստ. 121, էջ 233։ APO, II док. 204, 205, 206, 207, 210, 214, 215, с. 62, 64, 65, 66—67, 70, 72, 74.

54 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 30—31։

հաստատումն էր։ Ավելի ուշ, 1724 թ. ապրիլի 4-ին Իվան Կարապետը դրանից էլ ընդարձակ էր ներկայացնում հայ զինվորության ծրագիրը. «Ես էս խայերին մեչտեղն Քուրդ կայ։ Էս խայերն ասում ան, թէ... կուգնանք Քուրտին վերէն. քուրան փչացնենք, որ տեր էս մինչի Երևան ողջ խայեր ան՝ Ա(1) կուտառնան» (APO, II, док. 239, с. 99)։ Ավան-յուզբաշու զորքի կողմից Որոտնա բերդի պաշարումը բնավ պատահական չէր։ Տեր-Ավետիքի պատմածից պարզ է, որ ղարաբաղցիների արշավանքի պահին Ղափանում միայն երկու «թուրքական» հենակետ էր մնացել՝ Զևու և Որոտնա բերդերը (տե՛ս ՊՏԱ, էջ 133)։ Բնական է, որ Ավան-յուզբաշու զորաբանակը, որի կորիզը կազմում էին Շոշի սղնախի «շիրվանցի» մարտիկները, փորձելու էր ոչ թե խորանալ բուն Ղափանի խորքերը՝ դեպի Զևու, որը շատ ժամանակ կխլեր, այլ վերացնել Նախիջևանից, Մեղրիից և Արարատյան դաշտից Ղարաբաղ անցնող տարանցիկ բանուկ մայրուղիների և տեղական ճանապարհների հանգուցակետի շրջանում գտնվող Որոտնա բերդի թշնամական կայազորը[55]։ Դրանով իսկ Սղնախները նպաստում էին Արևելյան Հայաստանի հայկական զինված ուժերի միավորման կարևորագույն խնդրին՝ «որ տեղէս մինչի Երևան ողջ խայեր ան Ա(1) կուտառնան», և, միաժամանակ, լուրջ օգնություն էին ցույց տալիս ուժերի գերլարումով կռվող ղափանցիներին։ Հավանաբար, հենց այդ մասին էր Ավան-յուզբաշուն խնդրել Դավիթ-բեկը, որն իրեն հենակետ կառուցելով Զևու բերդից ոչ հեռու գտնվող Հալիձորի անապատում՝ ինքը պիտի հոգար Զևուի գրավման գործը։

Տեր-Ավետիքի վկայությամբ, «Յոհաննէսը», այն է՝ Ավան-յուզբաշին, Տաթևից վերցնելով Դավիթ-բեկի գանձարանը, վերադառնում է Ղարաբաղ, (ՊՏԱ, էջ 133. հմմտ. Համապատում, էջ 152)։ Սա նշանակում է, որ միջնադարի օրենքները գործում էին նաև Ղարաբաղի և Ղափանի հայ զինվորությունների փոխհարաբերություններում. գանձարանի բռնագրավումը, հավանորեն, սղնախցիների կողմից համարվել է արշավանքի ձեռնարկման և Որոտնա բերդի պաշարման դիմաց իրենց հասանելիք վարձք։ Այդ դրվագը փաստում է նաև, որ Դավիթ-բեկը նոր էր հաստատվել Հալիձորում և դեռ չէր հասցրել Տաթևից տեղափոխել իր գանձարանը։

Ըստ Տեր-Ավետիքի, Զևուն գրավվել է «Յոհաննէսի» զորաբանակի արշավանքից հետո և Որոտնա բերդի գրավումից առաջ (ՊՏԱ, էջ 133)։ Եթե ընդունենք, որ ղարաբաղցիների սյունյաց ռազմարշավը պիտի ավարտված լիներ ամենաշուտ 1723 թ. նոյեմբերի առաջին կեսին (դա միանգամայն հնարավոր էր, եթե հիշենք, որ Ղարաբաղից Ղափան 3 օրվա ճանապարհ էր)[56], իսկ Որոտնա բերդը, գիտենք, գրավվել է 1724 թ. մարտի 29-ին, ապա Զևուի առումը պիտի դնել այդ ժամանակակետերի միջև ընկած հատվածում։

Թերևս, հնարավոր է նաև որոշել Զևուի գրավման ամենահավանական ժամանակը. ա) օգտվելով Որոտանի կայազորի նկատմամբ ղարաբաղցիների ահաբեկիչ և կաշկանդող գործողությունից և, կանխելու համար շուտով սպասվելիք արտաքին անբարենպաստ շրջադրության՝ օսմանյան ռազմակալման ազդեցությունը Ղափանի ներքին իրադրության վրա, Դավիթ-բեկը ջանալու էր հնարավորին չափ արագ վերացնել Ասլամազ Ղուլու գլխավորությամբ Զևու բերդում կենտրոնացած թշնամական ուժերը. բ) Զևուի պաշարումը քիչ հավանական է 1724 թ. հունվարին—փետրվարի առաջին կե-

55 Այդ ճանապարհների մասին տե՛ս Ս. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 39, 43—44, 92—93։ Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք II, Երևան, 1959, էջ 231—232։ Թ. Խ. Հակոբյան. Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով). Երևան, 1966, էջ 95—100։ Ա. Ա. Զարյան. Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին.— «Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 1, էջ 224—226։

56 Տե՛ս APO, II, док. 291, с. 205. Հմմտ. The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself. 2nd ed., Calcutta, 1918, p. 363—373, 413.

մին՝ խոստաշունչ ձմեռվա պատճառով. գ) Ս. Շահումյանի վկայությամբ, նախքան Բարգուշատ արշավելը Թորոս-բեկը (որը մինչ այդ մասնակցել էր Ջևուի դրավմանը) մեծ զորահավաք է անցկացնում Զավնդուրում և 6000 զինվոր հավաքագրում (ՊՍՇ, էջ 124)։ Մեզ հայտնի է, որ Թորոսը արշավել է Բարգուշատ 1724 թ. մարտի վերջին[57], ուստի՝ եթե ընդունելու լինենք Ջևուի առումի հավանականությունը 1724 թ. փետրվարի վերջին—մարտի սկզբին, ապա Թորոսին զորահավաքն անցկացնելու և դժվարին արշավանքին (սկըզբից նա նույնիսկ նախատեսում էր Օրդուբադի գրավումը, տե՛ս ՊՍՇ, էջ 124) նախապատրաստվելու համար շատ քիչ ժամանակ կմնա։

Նույնատիպ տրամաբանության ես հանգում, դիտելով Դավիթ-բեկի՝ Որոտանի պաշարումին (1724 թ. մարտի 25—29) անմիջապես նախորդող գործողությունները Սիսիանում. «Գնաց ի Սիսան գաւառ, և անդ կալեալ կոտորեաց զիշխանս Թուրքաց» (ՊՏԱ, էջ 133. հմմտ. Համապատում, էջ 152)։ Այս պատժիչ ձեռնարկը ևս որոշ ժամանակ էր պահանջում։ Կարծում ենք, Ղափանում 1724 թ. ռազմական կամպանիան սկսվել է վերը նշված երկու զուգընթաց գործողություններով՝ Դավիթ-բեկի արշավանքով Սիսիան և Զավնդուրում Թորոսի կազմակերպած մեծ զորահավաքով (1724 թ. փետրըվար—մարտ)։ Այսպիսով, անենք վերջին հետևությունները. 1) Ջևուն, ամենայն հավանականությամբ, գրավվել է 1723 թ. նոյեմբերի երկրորդ կեսին կամ դեկտեմբերի սկզբին. 2) արդեն բնակվելով Հալիձորում, Դավիթ-բեկը ձերբակալեց իրեն ներկայացած Տեր-Ավետիքին և մելիք Փարսադանին և ուղարկեց Շնհերի բանտ, որտեղից 15 օր (ըստ Համապատումի՝ 12 օր) անց նրանց ազատ արձակեց Ավան-յուզբաշին։ Հետևաբար, Հալիձորի բերդի կառուցումն ավարտվել էր 1723 թ. օգոստոս—հոկտեմբեր ամիսներին՝ նախքան Աղնախների սյունյաց առաջին ռազմերթը (1723 թ. նոյեմբեր)։ Ավանդից բխում է մի հետևություն ևս. Տեր-Ավետիքը և Մելիք Փարսադանը ներկայանում են Դավիթ-բեկին Հալիձորում 1723 թ. հոկտեմբերի վերջին—նոյեմբերի սկզբին։

Սխալ կլիներ կարծել, սակայն, որ Ղափանում ծայր առած կռիվներում նրանք կարողացել էին մի ամբողջ տարի չեզոքություն պահպանել և նոր էին միայն միանում Դավիթ-բեկի գլխավորած շարժմանը։ 1722 թ. աշնան դրությունն արտացոլող սյունյաց զորավարների և զորքերի ցանկի[58] համաձայն, Տեր-Ավետիքը՝ 468 և մելիք Փարսադանը 250 զինվորով Դավիթ-բեկին դեռ այդ ժամանակ ենթակայություն հայտնած զորապետերից էին (տե՛ս Զորացուցակ, էջ 143—144)։ Այլ հարց է, որ այս երկուսը, հավանաբար, կասկած ունենալով Դավիթ-բեկի իշխանության կենսունակության նկատմամբ, 1723 թ. առաջին կեսին Ղափանի դեմ ուղղված խոշորամասշտաբ հարձակումների ժամանակ փորձել են հնարավորին չափ հեռու մնալ արյունալի բախումներից։ Հենց դրանում (և ոչ դավաճանության մեջ) է Դավիթ-բեկը մեղադրում նրանց՝ «ընդե՞ր ոչ ելիք յօգնութիւն մեզ» (ՊՏԱ, էջ 132)։ Դրանով է բացատրվում նաև նրա համեմատաբար մեղմ վարմունքը Ղափանի այս երկու ազդեցիկ դեմքերի հետ. Շնհերի բանտից նրանց վերադարձից հետո (1723 թ. նոյեմբեր) Դավիթ-բեկը «ընկալեալ զՄելիք Փարսադան՝ կացոյց զնա յիւրում կարգի զօրապետ ի վերայ երկու հարիւր փաթսուն և վեց զօրաց։ Եւ զտէր Աւետն ի վերայ չորեքհարիւր քառասնից, (ՊՏԱ, էջ 133. Համապատում, էջ 152)։ Տեր-Ավետիքի և մելիք Փարսադանի ջոկատների թվակազմի վերաբերյալ Զորացուցակի և ՊՏԱ-ի հաղորդումների չնչին տարբերությունը վկայում է, որ 1723 թ. նոյեմբերին, Դավիթ-բեկի համաձայնությամբ, նրանք վերստանձնել էին իրենց նախկին ջոկատների հրամանատարությունը։

---

[57] «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 130—133։

[58] «Այսոքիկ էին զօրավարք եւ զօրապետքն Դաւիթ Պէկին, մինչ էր ի Շնհեր...» (Զորացուցակ, էջ 143)։ Շնհերը Դավիթ-բեկի նստավայրն էր 1722 թ. աշնան ամիսներին. նույն թվականի վերջերին նա գրավեց Տաթևի բերդը և տեղափոխվեց այնտեղ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 3, էջ 76—80)։

СОБЫТИЯ В ЗАКАВКАЗЬЕ В 1723 ГОДУ И ПЕРВЫЙ ВСПОМОГАТЕЛЬНЫЙ ПОХОД В СЮНИК АРМЯН АРЦАХА

А. М. АЙВАЗЯН

Резюме

На фоне военно-политической обстановки в Закавказье в 1723 г. восстанавливается хронология ряда важных событий национально-освободительного движения Сюника (Капана) и Арцаха (Карабаха). Так, в частности, показано, что Давид-бек завершил строительство крепости Алидзор и переехал туда из Татева в августе—октябре 1723 г. Доказывается, что карабахские войска совершили не один вспомогательный поход в Капан в апреле 1724 г. (как принято считать в армянской исторической науке), а два, первый из которых, под предводительством Авана-юзбаши, был в ноябре 1723 г. и описан Тер-Аветиком в «Истории капанцев». Крепость Зезу была взята Давид-беком во второй половине ноября или в декабре 1723 г. Затронуты также некоторые источниковедческие вопросы «Истории капанцев».